/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ժամկետ**

Մոլդովա/Քիշնև/24.09-26.09.2019թ.

- **Նպատակը**

Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրության բյուրոյի կողմից կազմակերպված Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ) երկրների համար Բարձր մակարդակի սեմինար

- **Քննարկված թեմաները**

2019 թ. սեպտեմբերի 24-ին

Ողջույնի խոսք և բացման նստաշրջան՝ Եվրոստատի նախագահությամբ

Ողջույնի խոսք Եվրոստատի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (ԵԱԱԱ) և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) կողմից

Հիմնական ելույթներ՝

Պ. Էդուարդո Բարեդո Կապելոտ, Եվրոպական վիճակագրական համակարգի մեթոդաբանության, տարածման, համագործակցության տնօրեն, Եվրոստատ

Պ. Գինտաուտաս Բարանաուսկաս, գործառնությունների փոխտնօրեն, ԵՄ պատվիրակություն Մոլդովայի Հանրապետությունում

Պ. Վոլկեր Թաուբե, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (ԵԱԱԱ) վիճակագրական գրասենյակի տնօրեն

Պ. Սթիվեն Վեյլ, ավագ վիճակագիր և տարածաշրջանային խորհրդատու, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ-ի ԵՏՀ)

Պ. Վիտալի Վալկով, Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրության բյուրոյի գլխավոր տնօրեն

Այս նստաշրջանին ներկայացվեց սեմինարի նպատակը և հակիրճ նկարագրվեց առանձին նստաշրջանների հաջորդականությունն ու բովանդակությունը:

Նստաշրջան 1. Ներածություն և համագործակցության հարցեր՝ ԵԱԱԱ-ի նախագահությամբ

Եվրոստատը, ԵԱԱԱ-ն և ՄԱԿ-ի ԵՏՀ-ը ներկայացրեցին գործողությունների ամփոփ շարադրանքը և հարցեր առնչվող վիճակագրական համագործակցությանը ԱԵԿԿԱ երկրների հետ, ներառյալ՝ գլոբալ և գործընկերների կողմից փորձագիտական գնահատումների առաջարկությունների իրականացմանը հետամուտ լինելը,

Ասոցացման համաձայնագրերի իրականացումը, վիճակագրական մոդելային օրենքը, դոնորների համակարգումը, վերապատրաստման դասընթացները՝ նախատեսված ԱԵԿԿԱ երկրների համար, 2020 թ. համար գործնական արդյունքները, վիճակագրության պանելային հանդիպումները, ԹԱՅԵՔՍ-ի օգտագործումը, ինչպես նաև Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության Միջոցով (STEP) նոր տարածաշրջանային ծրագիրն ԵՀՔ-Արևելյան երկրների համար:

- Եվրոստատի միջազգային համագործակցության ռազմավարությունը, տ. Ավիս Բենեշ, Ընդլայնման, հարևանության և զարգացման համագործակցության բաժնի պետ, Եվրոստատ
- Եվրոպական վիճակագրական համագործակցության գործունեությունը ԵԱԱԱ-ի երկրներում, տ. Քիրսի Քարքքաինեն, Եվրոպական հարևանության քաղաքականության թիմի ղեկավար, Եվրոստատ
- Դոնորների համակարգման հետազոտություն - 2019 թ. արդյունքները, պ. Էնրիկո Ջիանոնե, Եվրոպական հարևանության քաղաքականության թիմ, Եվրոստատ
- ԵԱԱԱ-ի տեխնիկական համագործակցությունը ԵԱԱԱ-ի երկրների հետ, գնահատում և հեռանկար, պ. Վոլկեր Թաուբե, ԵԱԱԱ վիճակագրական գրասենյակի տնօրեն
- ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կարողությունների զարգացման գործողությունները ԵԱԱԱ-ի տարածաշրջանում, պ. Սթիվեն Վեյլ, ավագ վիճակագիր և տարածաշրջանային խորհրդատու, ՄԱԿ-ի ԵՏՀ
- Վիճակագրական կազմակերպության ձեռնարկի արդիականացում և առնչվող թեմատիկ կոնֆերանս ԵԱԱԱ-ի երկրներում, պ. Գաբրիել Գամեզ, ազգային վիճակագրական համակարգերի կազմակերպման և կառավարման միջտարածաշրջանային խորհրդատու, ՄԱԿ-ի վիճակագրության բաժին

Քննարկում

Նստաշրջան 2. Վերջին զարգացումները ԱԵԿԿԱ երկրներում՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի նախագահությամբ

Հանդիպման այս մասում ԱԵԿԿԱ երկրները համառոտ տեղեկացրեցին հետևյալի մասին.

- ամենակարևոր վերջին զարգացումներն իրենց ազգային վիճակագրական համակարգերում (ազգային վիճակագրական օրենքի փոփոխություն/իրականացման մարտահրավերները, կառուցվածքի փոփոխություն, գրասենյակի կազմակերպման կամ կառավարման փոփոխություն, նոր հետազոտություններ և մեթոդաբանություններ, որակի հարցեր, տվյալների արտադրում, գործընկերների կողմից փորձագիտական գնահատումների և գլոբալ գնահատումների փորձը և այլն):
- առաջացող առաջնահերթությունները, որոնք պահանջում են աջակցություն առաջիկա 2-3 տարիների ընթացքում:

- Ղրղզստանի Հանրապետության վիճակագրության մասին նոր օրենքը, պ. Աքիլբեկ Սուլթանով, Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի նախագահ

- Փորձագիտական գնահատման (Peer Review) հետադարձ կապը Հայաստանում, տ. Անահիտ Սաֆյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ վիճակագրական կոմիտե
- Ուզբեկստանի Հանրապետության վիճակագրական համակարգի զարգացման հեռանկարները, պ. Շոհրուխ Օդիլով, Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման և ինտերակտիվ պետական ծառայությունների բաժնի պետ, Ուզբեկստանի Հանրապետության վիճակագրության պետական կոմիտե
- Ղազախստանի վիճակագրության վերջին զարգացումները, պ. Նիյազ Կոշխիմբաև, փոխնախագահ, Ղազախստանի վիճակագրության կոմիտե, Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարություն

Քննարկում (նստաշրջան 2-ի շարունակություն)

2019 թ. սեպտեմբերի 25-ին

Մոլդովայի Հանրապետության ազգային վիճակագրության բյուրոյի կողմից կազմակերպված և նախագահվող նստաշրջանները

Նստաշրջան 3. Թեմա՝ Հաջորդ 2020 թ. մարդահամարների փուլը և առնչվող թեմաները

- Մարդահամարը Ֆրանսիայում, վարչական տվյալների հետ զուգակցված շարունակական հետազոտություն, պ. Լիոնել Էսպինաս, Մարդահամարների կազմակերպման և արտաքին հարաբերությունների բաժնի պետ, Վիճակագրության և տնտեսական հետազոտությունների ազգային ինստիտուտ (INSEE), Ֆրանսիա
- Սովորական ռեզիդենտ բնակչության գնահատումը Մոլդովայի Հանրապետությունում, տ. Վալենտինա Իստրատի, Մարդահամարի բաժնի պետ, Մոլդովայի վիճակագրության ազգային բյուրո
- Հաջորդ 2020 թ. մարդահամարի փուլը, պ. Յանուշ Դիգաշևիչ, ՏՀՏ համակարգերի տնօրեն, Աշխարհագրական վիճակագրության և մարդահամարի վարչության պետ, Լեհաստանի վիճակագրական գրասենյակ
- Համաուկրաինական մարդահամար. Մարդահամարի իրականացման նորարարական տարբերակ, պ. Իհոր Վերներ, Ուկրաինայի պետական վիճակագրության ծառայության նախագահ

Քննարկում

Նստաշրջան 4. Թեմա՝ Տարածման և հաղորդակցման ռազմավարությունը. Բաց տվյալները

- Մեծ տվյալները պաշտոնական վիճակագրության համար, պ. Պիտեր Ստրուիս, ESSnet 2018-2020 թթ. մեծ տվյալների ծրագրի ղեկավար, Նիդեռլանդների վիճակագրության կենտրոնական բյուրո
- Վիճակագրական գործունեության փոխակերպումը թվայնացման համատեքստում, տ. Իրինա Կանգրո, Բելստատի առաջին փոխնախագահ, Բելառուս
- Տվյալների ոչ ավանդական աղբյուրների ազդեցությունը վիճակագրության որակի վրա, այս տվյալների աղբյուրների օգտագործման առավելություններն ու սահմանափակումները, պ. Գաբոր Վալկո, Ոլորտային վիճակագրության բաժնի պետ, Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակ

Քննարկում

Նստաշրջան 5. Թեմա՝ Վիճակագրության որակը, նոր տեխնոլոգիայի և մեծ տվյալների օգտագործումը
- Պաշտոնական վիճակագրության մասին ձայնի տարածումը Սլովենիայում, տ. Տատյանա Նովակ, Գործընթացների և հաղորդակցման բաժնի պետ, Սլովենիայի վիճակագրական գրասենյակ
- Հայաստան՝ բաց ԿԶՆ, տ. Անահիտ Սաֆյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ վիճակագրական կոմիտե
Քննարկում
Մոլդովայի Վիճակագրության ազգային բյուրոյի կողմից կազմակերպված և նախագահվող նստաշրջանների ավարտ
Ցանկացած այլ հարցեր՝ Եվրոստատի նախագահությամբ

- 2019 թ. Բարձր մակարդակի սեմինարի եզրակացությունները
- 2020 թ. Բարձր մակարդակի սեմինարը, հավանական թեմաները, ամսաթիվը և վայրը:

2019 թ. սեպտեմբերի 26-ին
Նստաշրջան 6 ա. Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության Միջոցով (STEP) ծրագրի Կառավարող կոմիտե
Մասնակիցները՝ ԵՀՔ-Արևելյան երկրները
Կառավարող կոմիտեի նիստին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ հարցերը.
Ողջույնի խոսք, Ավիս Բենեշ, Եվրոստատի գլխավոր տնօրինություն, Եվրոպական հանձնաժողով
Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության Միջոցով (STEP) ծրագրի ներկայացում, Ալեքսանդր Վոլ, Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինություն և Յուրի Սկասկևիչ, Եվրոստատի գլխավոր տնօրինություն, Եվրոպական հանձնաժողով
Մեկնարկային փուլի արդյունքի ներկայացում, Թիերի Կուլե, Expertise France-ի կողմից ղեկավարվող կոնսորցիում
Ընթացիկ աշխատանքային պայմանավորվածությունների արդիականացում, Բեատա Սուսզտերովա, Expertise France-ի կողմից ղեկավարվող կոնսորցիում
Աշխատանքային ծրագրի առաջարկ, Թիերի Կուլե, Expertise France-ի կողմից ղեկավարվող կոնսորցիում
Քննարկում, հարց ու պատասխան, Ավիս Բենեշ, Եվրոստատի գլխավոր տնօրինություն, Եվրոպական հանձնաժողով
Հաջորդ քայլերը, ժամանակահատվածը, իրականացման ընթացքում գործընկեր երկրների ազգային վիճակագրական ինստիտուտների ներգրավումը, Քիրսի Քարքքաինեն, Եվրոստատի գլխավոր տնօրինություն, Եվրոպական հանձնաժողով
Հայաստանը մասնակցել է Վիճակագրությունը Արևելյան Գործընկերության Միջոցով (STEP) ծրագրի Կառավարող կոմիտեի նիստին՝ ներկայացնելով իր տեսակետները, նկատառումները և առաջարկությունները STEP ծրագրի վերաբերյալ:
Զուգահեռաբար ընթանում էր Նստաշրջան 6 բ. ՄԱԿ-ի Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունների հատուկ ծրագրի (SPECA) երկրների հանդիպումը
Մասնակիցները՝ Կենտրոնական Ասիայի երկրները:

2019 թ. սեպտեմբերի 24-ին Հայաստանը «Վերջին զարգացումները ԱԵԿԿԱ երկրներում խորագրով» Նստաշրջան 2-ին ներկայացվեց ամենակարևոր վերջին զարգացումները Հայաստանի ազգային վիճակագրական համակարգում, տեղեկատվություն վիճակագրական նոր օրենքի մասին, դրա իրականացման մարտահրավերները, նոր հետազոտությունները և մեթոդաբանությունները, որակի հարցերը և այլն:
Այս նստաշրջանին Հայաստանը ներկայացրեց նաև «Փորձագիտական գնահատման (Peer Review) հետադարձ կապը Հայաստանում» խորագրով շնորհանդես՝ ներկայացնելով 2018թ. իրականացված Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատումը, դրա արդյունքները և հետագա զարգացման առաջնահերթությունները: Գնահատումն իրականացվել է Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի փորձագետների կողմից (http://www.armstat.am/file/doc/99513323.pdf):
2019 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանը «Տարածման և հաղորդակցման ռազմավարությունը. Բաց տվյալները» խորագրով Նստաշրջան 4-ին ներկայացրեց Հայաստանի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) ցուցանիշների Ազգային հաշվետվողականության հարթակը (https://armstat.github.io/sdg-site-armenia/), որպես նոր հարթակ բարձրացնելու վիճակագրության առաջատար և համակարգող դերը (որի ստեղծման և գործարկման Հայաստանի փորձը "Հայաստան – Բաց ԿԶՆ-ի ուսումնասիրության օրինակ" զետեղված է Բաց Տվյալների Ձեռնարկության համար Կենտրոնի (ԱՄՆ) "Բաց ԿԶՆ-ի հանրություն" հատվածում՝ https://open-sdg.readthedocs.io/en/latest/case-studies/armenia) և այլնի վերաբերյալ: Տեղեկացվեց, որ ս.թ. սեպտեմբերի 17-ին գործարկվել է նոր կատարելագործված հարթակը (http://sdg.armstat.am/am/):

- **Արդյունքները**

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու պաշտոնական վիճակագրության օրենսդրության և որակի հարցերի հետ կապված վերջին զարգացումներին Եվրոպական Վիճակագրական Համակարգում, քննարկելու վիճակագրական համագործակցության գործիքները, կիսելու իրենց խնդիրները, մարտահրավերներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա կատարելագործմանը:

- **Նշումներ**

2019 թ. սեպտեմբերի 25-ին "Հաջորդ 2020 թ. մարդահամարների փուլը և առնչվող թեմաները" խորագրով Նստաշրջան 3-ին մարդահամարների հարցի քննարկման ժամանակ Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի ղեկավարը, ձայն

խնդրելով, իր խոսքում անդրադարձավ Ադրբեջանի, այսպես կոչված, զավթված տարածքներին՝ նշելով, որ ինչպես Ուկրաինան, Մոլդովան և Վրաստանը, Ադրբեջան ևս ունի զավթված տարածքներ: ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյանը, ձայն խնդրելով, հանդես եկավ պատասխան խոսքով և արտահայտեց իր խիստ բողոքը Ադրբեջանի ներկայացուցչի անհարիր վարքագծի համար: Նա նշեց. «Քանի որ Ադրբեջանի վիճակագրության ներկայացուցիչն, օգտագործելով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Բարձր մակարդակի սեմինարի հարթակն, իր խոսքում հնչեցրեց քաղաքական բնույթի մեղադրանք, ապա հարկ է նշել, որ սույն հարթակը քաղաքական դիրքորոշումների համար չէ նախատեսված: Այդ հարցերով զբաղվելու մանդատը տրված է ԵԱՀԿ-ին, իսկ վերջինս դրանք որակում է որպես հակամարտություններ և պետք է հիշեցնեմ Ադրբեջանի ներկայացուցչին, որ մենք հիմա գտնվում ենք ոչ թե ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նիստում, այլ Եվրոստատի կողմից կազմակերպված սեմինարում, որի լիազորություններն ըստ Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքների բացառում են պաշտոնական վիճակագրության ներքաշումը քաղաքական և նմանատիպ շահերի կոնֆլիկտներում»:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի ներկայացուցիչ՝ պ. Գաբրիել Գամեզը ևս անմիջապես արձագանքեց Ադրբեջանի ներկայացուցչի ելույթին՝ հիշեցնելով, որ հանդիպումը նվիրված է վիճակագրությանը և պրոֆեսիոնալ քննարկումներին, այլ ոչ թե քաղաքական շահարկումներին:

Սեմինարի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Լիտվայի, Լեհաստանի և Նիդեռլանդների ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի ֆինանսական աջակցությամբ ՀՀ 2020թ. մարդահամարին օժանդակության տրամադրման և բնակչության վարչական ռեգիստրի հիման վրա մարդահամարի անցկացման գծով Շվեյցարիայի վիճակագրական ծառայության փորձագետների կողմից հնարավոր այցելության վերաբերյալ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Եվրոստատի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան